

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »

Արտասահմանի հա-
մար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

Անկերիկայի համար
Տարեկան 2.50 ցր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԻՅԻՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամուցման տոյր առաջին
երեսին համար 40 սանթիմ
Ե. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ Ե. երեքին
սանթի սանթիմերու համար
20 Օլո գեղջ կըլլայ:

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկեյ
Խոնարարներու հասցիսն

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԻՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Կրոնթիմի ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՅԱԿԵԼՈՒԱՄ «ՇԱՐՇՈՒՄ»

Բազմաթիւ թրքախօս հայերու խնդրանքին վրայ այս ամսոյ մէջ պիտի սկսինք հրատարակել հայերէն տառերով եւ թուրքերէն լեզուով թերթ մը «Շարժում» կէս ծաւալովը, շաբաթը երկու անգամ:

Յաւելուածը՝ որ պիտի պարու- նակէ օրուան քաղաքական ու ազգային լուրերէն զատ, տեսութիւններ, թղթակցութիւններ եւ վիպակներ. պիտի ունենայ իր մասնաւոր խմբագրութիւնը, ինչպէս նաեւ բուն «Շարժում»էն զատ է անոր բաժանորդագրութիւնը որ է տարեկան 6 ֆրանք եւ ձեռքէ հատը 5 սանթիմ:

Արտասահմանի համար 1 ֆրանք աւելի է:

Բաժանորդագրութիւնը բացուած է այսօրուանէ եւ կանխիկ:

Հասցէ՝

Redaction de «Charjoum»
Yarna (Bulgarie)

ԳՐԱՎԱՆ ՅԱՂԹՈՒ-ԹԻՒՆ ՊԵՏՔ Է

Սուլթանը իրատէով տրտօնել է Սոսյ կաթողիկոս ընտրել հին սովորութիւններէ համեմատ. եւ «Թան» հայոց Պատրիարքարանի համար մի նշանաւոր յաղթութիւն է համարում այդ:

Բայց արդեօք հայերս էլ կարող ենք յաղթութիւն համարել: Ո՛չ եւ ո՛չ:

Մեր Պատրիարքարանի համար ուրիշ, աւելի օգտաւէտ, գրական յաղթութիւններ են պէտք: Բանտերը լիքն են անմեղ հայերով, գողթականները չեն կարողանում վերադառնալ հայրենիք, թալանը եւ տաւրը շարունակվում է երկրի մէջ. եւ Օրմանեան մինչեւ օրս Սուլթանի օտարերը լիցելով ոչ մի միջոց ու դարման չը կարողացաւ գտնել երկրի մէջ տանջվող, բանտերի մէջ հեծող հայերի անտանելի

վիճակը գոնէ մի քիչ տանելի դարձնելու:

Երկրի հայերը շատ դժգոհ են Պատրիարքից եւ չեն կարողանում արտայայտել իրանց դժգոհութիւնը. նրանք յոյսերը դրել են արտասահմանի հայերիս վրայ, իսկ մենք էլ բացի նրանունը եկեղեցուց դուրս քշելուց՝ ուրիշ միջոց չունենք: Դեռ այդ էլ ամբողջովին չկարողացանք կատարել, թէեւ ամէնքս էլ հասկացանք որ արտասահմանի հայերի տաժ պատիժը թէ Օրմանեանի եւ թէ Սուլթանի վրայ ազդեց:

Սուլթանը նկատեց որ իր սիրելի պատրիարքի դրութիւնը բոլորովին խախտվում է, հայերը զզվում են իրանց հոգեւոր պետից եւ նրան ուղղակի Փատիշահի ստրուկ գործիքը համարում. եւ Օրմանեան ստիպված պէտք է լինի հրաժարվել, եթէ Փատիշահը գոնէ մի փոքրիկ զիջում չտնի եւ հայերի շրթունքներին մեղր չքսէ: Եւ այդ մեղրը քսեցին. հայերը կարող են սահմանագրութեան համաձայն Սոսյ նոր կաթողիկոս ընտրել: Չէ որ հայերը կրօնական փարախ են, նրանք վտանգաւոր են միայն այն ժամանակ, երբ նրանց կաթողիկոսին, եկեղեցուին կամ վարդապետին դիպչում են Սուլթանը եւ նրա կառավարութիւնը:

Բայց արդեօք հիմա հայերս այդպէս ենք. մի՞թէ բոլորովին փոփոխութիւն չը կայ. մի՞թէ կը բաւականանանք Սոսյ կաթողիկոսի ազատաբար ընտրելով. եւ Օրմանեան ու Սուլթանը իրանց ձեռքերը չփելով կրկին կը շարունակեն հայերիս քիթին խընդալ:

Չէ, մենք կարծում ենք որ հայերս դադարել ենք կրօնական ոչխար-փարախ լինելուց. հիմա հասկանում ենք որ թէ կաթողիկոսական եւ թէ պատրիարքական խնդիրները բարեյակով լուծուած ոչ մի դրական օգուտ չեն կարող բերել մեր դժբախտ երկրին եւ ժողովուրդին: Չէ,

Օրմանեան եւ Սուլթան էլ չեն կարող մեզ խաբել. նրանք կարող են ձեռք ձեռքի տաժ մեզ տանջել, մեր ցաւերը կրկնապատկել, երբեմն մեր շրթունքներին մեղր քսելով ջանալ մեզ թմբեցնել, բայց խաբել այլ եւս անկարող են:

Մենք Օրմանեանին միշտ պէտք է կրկնենք. ժողովուրդը տանջվում է. նրան օգնիր դրականապէս, հաց եւ տանելի կեանք ստեղծիր նրա համար. վանք, կաթողիկոս, պատրիարք այնքան կարեւոր բաներ չեն մեզ համար. ժողովրդի կենսական պահանջներին բաւականութիւն տուր, ժողովրդի հետ գնայ, բայց ոչ Սուլթանի:

ՎԱՐԴ

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

Մեր հրապարակային քննութիւններու օգտաւարութեան անճարակ փաստաբանը ի զուր կը ճգնի իր միամիտ յօդուածը պաշտպանել «Ըսի, չըսի» զրախօսութիւններով եւ մանաւանդ պարագայ առ կը փորձէ փոխարինել կամ ինձ վերադարձնել իմ իրեն ուղղած արդարացի զիտողութիւններս:

Երբ Պ. Չարդար արտասոց կարծիք մը յայտնած պահուն իսկ անմեղադրելի (irreproachable) ըլլալու յաւակնոտութեամբ մը լեցուած կը վրդովուի եւ իմ բացատրութիւններս ու վիճարանութեան առարկայ եղող հարցի ուսումնասիրութեան մէջ հեղինակութիւն ներկայացնող գիտուններ է մէջ բերած վկայութիւններս կը խեղաթիւրէ. արդեօք ինքզինք խաբել կուզէ չէ թէ կը կարծէ որ ընթերցողները հայերէն չեն հասկնար:

Իր քմահաճ պատճառաբանութիւնները մի առ մի ջրել շարժիր. խնդրե՛ք շատ պարզ է, ինք կը կարծէ թէ «առանց բացատրութեան մեծերու ինչպէս նաեւ փոքրերու մանաւանդ իրապարտախոսին ֆենտրիւն ընելը օգուտ է զուրկ չըլլալէ զատ հարկ անհրաժեշտ իսկ է»:

Եւ դիտե՛ք ինչու «Ինչպէս պատանին նոյնպէս 5-6 տարեկան աղեկը պարտի քննութեան ենթարկուի», որպէս զի այդ առթիւ իր ազատ խօսելու, յիշողութեան եւ այլ կարողութիւնները զարգացնելու Այդ սեսակ արտասոց կարծիքնե-

րու հանդէպ որոնք մեր հրապարակային քննութեանց փաստակարար անողականութիւնը պաշտպանելու եւ զայն մեր մէջ աւելի արմատացնելու բնութիւնը ունին, չէի կրնար լուռ մնալ, եւ իրրեւ ուսուցիչ մը որ ինքզինք անորոշութեան յանձնած չէ, իր պաշտօնին բերմամբ կրթական ամէն ինչորով կը հետաքրքրուի եւ մանկավարժութիւնը քիչ շատ ուսումնասիրած ըլլալով ամէն հարցի մասին գէշ աղէկ իր համոզումները գոյացուցած է. ջանացի փաստել թէ:

Ֆենտրիւնները տղուն կազմական ու եւ կարողութիւնը եւ մաքի այս կամ այն յատկութիւնը զարգացնելու նպատակ չունին:

Անոնց գոյութեան միակ իրաւունքը ուսուցիչն եւ աշակերտին տարեկան աշխատութիւնը զօնքօն ընելն է:

Բայց մեր իրապարտախոսին ֆենտրիւնները այդ նպատակին ալ չձանձախելէ զատ փաստակար իսկ են ուսուցչին բարոյականութեան եւ աշակերտին առողջութեան սեսակէտներով:

Պ. Չարդար ինչու կը գծուի եւ այս ըսածներս հաստատելու համար իմ տուած բացատրութիւններս եւ հեղինակաւոր մանկավարժներէ եւ հոգեբան գիտուններէ զիտմամբ մէջ բերուած վկայութիւններս հեղինակեամբ կը ընդունի:

Ստիպուած եմ անգամ մը եւս կրկնելու թէ մանկավարժութիւնը բժշկութեան չափ բարդ ու փափուկ գիտութիւն մըն է միանգամայն եւ զարոցական կազմակերպութիւնն ու զարոցավարութիւնը չէ թէ քմահաճ ենթագրութիւններու այլ գիտական ամէն աղբի եւ ամէն ժամանակի համար անփոփոխ օրէնքներու վրայ պէտք է հիմնուած ըլլան:

Արդ՝ մէկը երբ կրթական հարց մը քննած ատեն այդ օրէնքներէն մին կամ միւսը կը բացատրէ եւ հեղինակաւոր գիտուններէ վկայութիւններ ալ կը բերէ, բնաւ մեղադրելի չէ եւ գիտական օրէնքի մը բացատրութիւնը եւրոպական գրքերու մէջ ալ գտնուելը յօդուածագրին նուաստութիւն չկրնար համարուիլ. ընդհակառակը այդ ամէնը անոր շատ կարգացած, խնդիրը լաւ ուսումնասիրած ըլլալը կապացուցանեն:

Ուրիշն թող չվրդովուի եւ չխառնի Պ. Չարդար երբ իրեն պէս քմահաճ ենթագրութիւններու վրայ չեմ հիմնուիր այլ վերեւ ըսածներս հաստատելու համար կենսախօսական եւ հոգեբանական օրէնքները եւ հեղինակաւոր գիտուններու վկայութիւնները փաստ կը բերեմ:

Ուրախ եմ յայտարարելու որ մեր հրապարակային քննութեանց մասին իմ յայտնած կարծիքներս կը դաւանին մեր մէկէ աւելի վարժարաններու ուսուցիչները որոնց հետ առիթ ունեցայ այդ մասին խօսելու...

Բայց Պ. Զարգար կերիւի առաջուց մտադրած է իր կարծիքներուն մէջ յամառել. առիկայ իր գիտնալու գործն է. ես բնաւ ատոր համար փոյթ չեմ բնիք, մանաւանդ երբ գիտեմ թէ ինք արհեստով ուսուցիչ չէ...

Կ. Պիոն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փրովիդենս, 19 Յուլիս

Ծ. վարդապետ Վաղինակ Սիսակեանի մահուան տխուր լուրը արդէն ձեռքի հաղորդած եմ. հիմա քանի մը խօսք ալ ըսեմ անոր յուղարկաւորութեան մասին:

Յուլիս 9ին վանի յանձնեցինք յաւիտեանական մօր, սեւ հողին: Հայ ժողովուրդը կը սգար, երկինքն ալ կարծես սգաստ էր. սեւ սեւ ամպեր պատած էին զանի, որ կուլար մեզ նման: Զը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՎԱԿԱՆ ԽՆՊԻՐ ԵՒ ԵՐԻՊՈՒԿԱՆ ՍԱՍՈՒԼԸ

Եւրոպական մամուլն ու կարծիքներն նորէն գրգռուած են թրքահայաստանի վերջին զէպքերէն. այս առթիւ «Օթտիթէ»ի մէջ կը կարդանք հետեւեալն.

Արեւելքէն եկած լուրերուն եթէ հաւատք ընծայուի, Հայաստանի կացութիւնը բարեօրոյց չերեւիր: Կարծես ճակատագիր մը, անողորմ ճակատագիր մը, կը հարածէ այս թշուառ ազգը, զոր անվերջանալի դժբաղդութիւնք կը հարուածեն:

Պուլանդ-գազաքէն (Հայաստան) հեռագիր մը իմացուց թէ հայկական հինգ զիւղեր քիւրտերէն քանդուած են: Այս վերջինները հայոց բոլոր տունները կողոպտած են, յափշտակելով ամէն արժէք ունեցող իրեղէններ:

Հարիւր յիսուն հայեր սպաննուած են եւ քսան կին անյայտացած:

Այս քաղաքացի հայերէն կիսաքերնին ազատողներն անպաշտպան եւ ապրելու միջոցէ զուրկ են:

«Ահա Փոքր-Ասիայէ հասած վերջին տխուր լուրերը, կը գրէ Պ. Օկիլեսս «Ժուռնալ աը Պոնտօ»ի մէջ: Ապտիւլ Համիտ պիտի արձանագրէ անշուշտ այս փառաւոր շահասակա-

նայած տեղատարափ անձրեւին հայ գաղթականները եկեղեցի կը դիմէին կատարելու սիրած վարդապետին յուղարկաւորութիւնը:

Եկեղեցիին մէջ 500 էն աւելի երկսեռ բաղնիքովն կար. պատարագիչն էր Մաշտոց վարդապետ. կային եւ ուրիշ քաղաքներէ եկած վարդապետներ, նոյնպէս եւ Սարաճեան եպիսկոպոսը:

Վերջինս կատարեց օծման հանգէք եւ կարգ մը գովասանքներ ըրաւ վախճանեալին. ծիծաղելի էր տեսնել թէ եպսոքինչպէս կողորդելու արցունքներ կը թափէր այն մարդուն դիակին վրայ, որ լսածիս նայելով. «մարտեան» «կենդանի ընկածներու» հետ համերաշխութեան գալով, որոշած էր տեղական դաշնակցականները ազգային գործերու մէջ մտնելու արգելուլ եւ անոնց համակիր Վաղինակ վարդապետը Ամերիկայէն հեռացնել եւ անոր տեղը բերել տիրահաշակ Արսէն վարդապետը...

Պըտտ... Եւ ահա նոյն Սարաճեանը իր կեղծ արցունքներով կը պղծէր անարատ դիակը. Ժամը 4ին եկեղեցիէն ելանք գերեզմանատուն երթալու:

Ծաղկազարդ դիակառքին կը հետեւէին 30ի շափ կառքեր հայերով լեցուն. դանդաղ ընթացքով վերջապէս հասանք Վաղինակ վարդապետին յաւիտեանական բնակավայրը որ տեղւոյս հայութիւնը մասնաւորապէս

թիւններն, իր անհամար զոհերու մեղեկական պատմութեան մէջ: Այս կարմիր Սուրբաքը, պարտի պարծեանայ անգութ աւազակ քիւրտերով, որոնք վայրենի եւ մարդակիր կատաղութեամբ մը կը կոտորեն քրիստոնեայները, եւ այդպէս Սուլթանին, Օսմանեան կայսրութեան, քրիստոնեայ հպատակներուն ջնջման գործը կը դիւրացնեն:

Ինչ պիտի ըլլան այժմ արդէն անոգնական եւ առանց բնակարանի այս դժբաղդ զոհերը. զիւղերնին քանդուած, տուններնին հրդեհուած դաշտերնին աւերուած. եւ ահա ճամբաներու վրայ ինկած. թափառական այնպիսի երկրի մը մէջ, որ չունին այլեւս ապրելու որ եւ է միջոց մը. լքուած ամէն բանէ, մեռնելով անօթութիւնէ եւ թշուառութիւնէ:

Ապտիւլ Համիտ, — այս մարդակերպ հրէշը, որ միշտ քրիստոնեայ արեան հոտը կը շնչէ եւ որ երբէք չկրնար իր ծարաւը յագեցնել, իր հաւատարիմ պաշտօնեաների միջոցաւ հերքել պիտի տայ, իր քիւրտներու կողմանէ գործուած անողորմ յանձանքներն հաստատող լուրերն, եւ պատճառը պիտի վերագրէ հայոց գրգռութեամբ եղած խոզովութեանց:

Իրաւ է որ սուտի մօտ բան մը չէ, նորա համար ասիկա մեծ կարեւորութիւն չունի: Հայաստանի ազատութեան եւ բարենորոգման համար ըրած պահանջներուն չկրնար ներել: Մինչեւ ցայսօր, Տիրիտիսի եւ Կալիզուլայի համբաւին նախանձա-

ղնեց: Դադարը շրջապատուեցաւ ծաղիկփունջերով որ նուիրած էին հոգաբարձուներ եւ մանաւոր անհատներ: Կերեւային նաեւ Հ. Յ. Դաշն. Փրովիդենսի կօմիտէի եւ «Հայրենիք» թերթի խմբագրութեան պատկերը. առաջինը խաչածեւ, երկրորդը եռանկիւնի:

Առաջին դամբանականը խօսեցաւ սեղոյս բողոքականներու քարոզիչ մարտականներէն, Պ. Կ. Մարդակէտեան. անէճքով, հայհոյանքով եւ գովասանքով խառն դամբանական մէք:

Այդ պարոնէն թոյնէ աւելի բան մը արդէն պատել չէ կարելի. երբ Վաղինակ անկողնոյ կը ծառայէր ըստ իր ամէն տեղ «թողէք որ աստիկ»: Մարդակէտեանի եւ իր նմանը «կենդանի ընկածներու» հակառակութիւնը Վաղինակ այն օրէն շահեցաւ, երբ հրապարակուեւ ամէն տեղ ըսաւ. «ազգի ամենամեծ դաւաճանները Արփիարեան եւ Քէլէկեան սրիկաները են»:

Մարդակէտեանէն յետոյ խօսեցան Պ. Պ. Մելիտոսեան, ձեւալեան, Պէնիկեան եւ Պետրոսեան, որոնք պարզեցին Վաղինակի անձնաւորութիւնը իբր եկեղեցական հայրենասէր, մեր բողոքական կղերական մէջ իբր բացառութիւններէն մին...

Դամբանականներէն վերջ, եկեղեցականներ պէտք եղած ազօթքները ըրին եւ մօնք մեր սիրելի յեղափոխական վարդապետն հողին յանձնելով, լալագին, տխուր եւ տրտում տուն վերագարձանք:

որ. նողկալի աւազակը, բարենորոգումը կը ընէ, եւ մի քանիներ եւս արդէն գործադրեց. իր հպատակները հաղարկելով կատրից եւ անոնց ունեցածներն աւարի տուաւ. եւ իբր աղատութիւն ուրիշները բանտի եւ քարտի դատապարտեց:

Լրագրիչները դեռ չիմացուցին թէ Լահէյի խորհուրդին կատակերգակաները Հայաստանի բողոքները ինկատի առած են. անշուշտ ստուար ինդիքներն արդիւնով «քաֆէ-գօս-սէր»ի զիւրաւագետներուն զբաղիլ, առայժմ ժողովրդեան մը սրբազան իրաւունքներով, որ դահիճի մը կօշիկին տակ ճգնուած է. դահիճ մը, որ մարդկութեան վերաբերեալ հազիւ զէմք մը եւ ալ ոչինչ ունի, եւ որ Պէհնազէնի դափնիներն կարգիլն զինք քնանալէ:

Եւրոպոս, որ հակառակ իր յայտնի անհոգութեան, Հայաստանի ձայնը լսեց, պիտի ըստիպուի խնդիրներու բերմամբ՝ ձեռք առնել այս ազգի պաշտպանութիւնը, եւ իր ծրագրերը գործադրել տալ Սուլթանի:

Թիւրք կառավարութիւնը, հայոց կոտորածներէն ստանաւորութեամբ հանդիսատես լինելէ չզոհանալով, աւելին եւս կընէ. նոցա ունեցածն կը գրաւէ, եւ այս պատճառաւ է որ բազմաթիւ ընտանիքներ բռնադատուած են քաջքել տանիլ իրենց թշուառութիւնը ամէն օտար երկրներու մէջ:

Այս թշուառականներու վիճակը օրհասական է, պէտք է շտապել վերջ

Վիլնիւս, 20 Յուլիս

Օտար երկրի տակ, չորս պատմէջ խմբուած են ափ մը հայեր: Անոնց գէմքերուն վրայ կը կարգացուի արտասովոր յուզում: Միջահասակ, նուրբ կազմուածքով հայաստանցի մը կը ճռնէ: Ամէնքն ալ յափշտակուած են անոր պերճ խօսքերէն, զգալուն շեշտերէն: Վայրկեանները քանի արագ սահին, նոյնքան անհանգրձութիւն կարտափայլին ունկընդիրներու աչքեր: Ո՞վ է ներբախազմ հայաստանցին, որ անհունապէս գերեր է այդ երիտասարդ հոգիներ, որ դարձեր է անոնց պաշտելի միանձ: Որո՞ւն է այդ քաղցրահնչիւն բառբառը, որ սէր կը քարոզէ, սէր առ Աստուած, սէր առ Հայրենիք, առ Ազգ, սէր առ ընկեր, որ հաւատարմութիւն կը շտապողէ, որ ուղղութեան դասեր կաւանդէ, որո՞ւն է այդ թմբուած ձայնը, որ կը քաջալերէ եւ վառ յոյսեր կը ներշնչէ: — Այն ուսուցչապետ Յ. Գաեայեանն է, ունկընդիրներու սիրեցեալ դաստիարակը, որ անխարքախ սիրով սիրեց իր աշակերտները եւ այսօր հրաժեշտի ողջոյն կուտայ անոնց, վերջին «մնաք բարեաւոր ըսելու եկեր է, որովհետեւ հետեւեալ օրը Բարիկ պիտի մեկնի ընտանեօք. սառն հիւսիսի. Սուէպիոյ (Վիւրաէմբերգի հարաւային մէկ մասն է) փոփոխական կլիման ապառոյշ է իրեն համար: Ամէնքն ալ լուռ են պահիկ մը, այն ուրտատոցոր լուռութեամբ, որ տեղի կուենայ հոգեկան խորին յուզ-

մը աալու: Հայաւեր Դաղիացիները պարտին իրենց բողոքները լսելի ընել ամէն տեղ. մամուլի մէջ, ժողովներու մէջ եւ ուրիշ ամէն միջոցներով. եւ անմիջապէս հաղորդել թուրքոյ ղեկավարին, Բարիկ, Բրէզպուրի փողոց թիւ 10: Ապտիւլ Համիտի պաշտօնեաները պիտի գիտնան, ինչ որ արդէն տեղեկութիւն ունին, թէ ինչպէս կը գնահատուին օտար երկիրներու մէջ իրենց արքայ անամթութիւններն. քաղաքակրթեալ ազգաց վեհապետներու ամօթն եւ Բիւզանդիոնի բռնակալն, ասիական մի քանի նահանգներու բաժանման ժամուկ սպասելով հանգերձ, պիտի իմանայ թէ արհամարուած իշխան մէ, — ոչ միայն իր տէրութեան մէջ — այլ եւ եւրոպայի ամէն երկիրներու մէջ»:

Յետոյ «Օթտիթէ» կաւելցնէ: Ար Գարու յաւիտեանական ամօթն պիտի ըլլայ եթէ այսօրինակ աւազակ մը մնայ Եւրոպական գահի մը վրայ. Պէհնազէն սուրբ մըն էր Ապտիւլ Համիտի քով, բայց իր տէրութիւնը, ճշմարիտ է, այսպիսի մոլեկան ցանկութեան մը առարկայ չէր: Երբ զիւրաւագետներն զիտողութիւններ կը խմբագրեն, կարմիր Սուրբաքը, ամենայն հանդարտութեամբ իր քրիստոնեայ հպատակաց խողխողումը կը շարունակէ:

Թարգմ. Յի Սէ

Բարիկ, 28 Յուլիս

մունքներու ժամանակ : Պ. Գա-
նայեան տաք համբոյրներ կը
դրոշմէ աշակերտներուն ճակատին .
վերջիններս , արտասուքը հաղիւ
լսպատ , սիրելի ուսուցչին ձեռքը
կը համբուրեն :

Գա՛նն էր այդ րոպէն մեզի
համար . . . բաժանման ժամը կը
ձօնակար : Է՛ , ո՛վ գիտէ , թերեւս
ալ չպիտի տեսնէինք այն անձը ,
որ ամբողջ երկու տարի իր մաս-
նագէտ մանկավարժի ձեռքերը
ի գործ դրաւ մեր բարուք դաս-
տարակալութեան համար , որ մեզ
տղիկացուց սիրելի գեղեցիկը , ա-
սել վատը , որ մեզ սորվեցուց ,
ուր որ ալ ըլլանք , սիրելի մայ-
րենի սակեղէն լեզուն , սիրելի
հայրենիքը , որ մեզ ներշնչեց
բարձր գաղափարներ , մեր ա-
մէն աղօթուած ձեռնարկներու
ձեռնամուխ եղաւ և քաջալերեց
մեզի : Ան չը մոռցաւ նաև իր ա-
շակերտները ֆիզիքականապէս
զօրացնել . շատ անգամներ ա-
ռող ապահով գասեր կայանդէր :
«Առողջ միտք , յառողջ մարմին»
սկզբունքը շատ կը սիրէր ան :
Եւ այսօր հաշիւ կուտայ ու հաշիւ-
կը պահանջէ : Ան հոգեկան ան-
հուն գոհունակութիւն կը զգայ ,
զինքը երջանիկ և վարձատրուած
կը սեպէ , որովհետեւ պարտակա-
նութիւնը լիովին կատարած է :

Հինգշաբթի զով առաւօտով ,
հայ տղաքներէ շրջապատուած
կառք մը կը մեկնէր Վրիճէմս-
ասօրֆէն . երախտապարտ աշա-
կերտները եկեր էին վերջին
յարգանքը մատուցանել իրենց
սիրելի ուսուցչին . բաժանման
վերջին րոպէն արգէն հնչած էր :
Կառքին քովէն լսելի եղաւ .
«Սիրելիներ , կը սիրեմ յուսալ ,
որ հայ անուան պատուաբեր կեր-
պով կաշխատէք ձեր պարտակա-
նութեանց մէջ» : Այսպէս քիչ մը
ուղեկցելէ ետք տխուր ետ դար-
ձանք . ամպամած երկինք կար-
ծես մեր սրտի թախիծը կարճա-
զանգէր :

Ընկերներ , ի՞նչ փոյթ մղոն-
ներու հեռաւորութիւն , մեր սիր-
տերը միշտ իրարու համար պիտի
բարասին . . . :

Շ թու թկարթ մայրաքաղաքին
մէջ հրատարակուող թերթի մը
մէջ կարդացինք հետեւեալը .

«Անցեալ տարու զեկտեմբերէն
ի վեր հոս հայ մը հաստատուած
է , որ զինքը Սարգիս Արսլան-
եան , Յակոբ Փոն կարապետ (լօն
տիպոսը կը գործածեն գերմա-
նական աւագանին և ազատ գա-
սակարգը . Ֆրանս . աը) և Իէհլի-
վանօղլան կանուանէր : Սա շատ
մարդոցմէ իւրեւթեամբ կե-
րակրոյ և բնակութեան համար
ստակ կը շորթէ և կեղծ միջոց-
ներով վաճառականներէ ապրանք
կը վերցնէ : Տեղական ընտանիք-
ներու մէջ ալ կը յաջողի սողալ և
անոնց դիւրահաւատութիւնը շա-

հագործել . զինքը տեղ մը խեղճ
հին թուրք պաշտօնակալ մը և
ուրիշ տեղ մը միլիտանտէր մը
կեղծելով : Խաբեւան ձերբակալ-
ուելով հարցուփորձի ենթար-
կուած է : Ուսելի՞նութեան քով
ինչ տեղեկութիւններ որ կը պակ-
սին իր խարդախութիւններու
մասին , շուտով երեւան կելլեն» :

Ուսումնարանին հայասէր տնօ-
րէն Յիկլըր ցատելով մեզ կըսէր
«Հայաստանի նպաստի գործին
ահագին վրաս հասուց այս անա-
ռակը» :

Խեղճ ազգ , տակաւին ի՞նչ
նախատինքներ պիտի կրէ այսօ-
րինակ հրէշներու երեսէն : Սա
իրեւե մէկը բազմաշարժար հայ
ժողովրդի զուակներէն , իբրեւ
զոհ մը թըքական բռնութեան (°)
պաշտպանութիւն կը գտնէ հայա-
սէր գերմանացիներէ : Ինք թըր-
քական գարոցներու մէջ մեծցու-
ցած է դղում գլուխը : Տարի մը
տեղս մնալէ յետոյ տնօրէն Յիկլըր
մտաւայ Ռաֆէնսպուրկ քաղքին
մէջ լուսանկարչի մը քով աշկերտ
կուտայ . հոն իր ստահակութեանց
և անասն շահատակութիւննե-
րու համար երեք ամիս բանտար-
կուելէ ետք՝ մայրաքաղաք մեկ-
նած և այս անպատուաբեր ,
նախատախից գործերը ստրքած է :
Այսպիսի գործերու մէջ մեծ պա-
տասխանատուութիւն ունին ա-
ռանց ընտրութեան հանդիպողը
իրեւե հալածեալ հայ անհատե-
րոպայ զրկող անձինք , որոնցմէ
մեծ բաժին մը կը յինոյ Օրիորդ
Արապի Գոճապաշեանի ի Պէպէկ
(Կ. Պօլիս) : Այս առաջինը չէ ,
մենք այսօրինակ զլուսելի տեսա-
րաններու շատ ներկայ եղած
ենք :

Յաւալի իրողութիւն :
Անասիա-Մարգպետնի
Հոգարեք . 27 Յուլիս

Վառնա հրատարակուող «Իրա-
ւունք» թիւ 54ի մէջ , Արա-
Արշամ ստորագրութեամբ «հար-
ցում» մը վերնագրի տակ , կար-
դացինք սկնարկութիւն մը
Պուգարէշէն Լահէյի ժողովին
հայ պատուիրակի առթիւ հա-
ւաքուած գումարի մասին :

Իրողութիւնը այս է որ , Պու-
գարէշէն հայ գաղթական երի-
տասարդութեան ստուար խումբ
մը , գրեթէ ժամուայ մը մէջ իր
գործաւորական քսակէն վճարեց
101 Ֆրանքի գումար մը , ըն-
դունելով , Վառնայի . Բուսճուգի
և այլ բազմաճայ քաղաքներու
ընտրեալ Տիար Մինաս Չերաղը ,
առանց քննադատութեան մտնե-
լու , վստահ լինելով թէ աւելի
հայակէրտն քաղաքներ անշուշտ
համոզմունքով Տ. Չերաղի ընտ-
րութիւնը վաւերացուցած էին :
Եւ քանի որ մէկմէ այդ նպատա-
կի համար միայն 60 Ֆրանք պա-
հանջուած էր անյապաղ և ընդ-
փոյթ յղեցինք այդ գումարը

Վառնայի մասնաճիւղին , նպա-
տակին գործածուելու համար :

Բայց ինչպէս որ գիտէք մեր
մէջ ամենուրեք պղտոր ջուրի
մէջ ձուկ որսացողներ միշտ ե-
ղած են և կան . հոս ալ չուշա-
ցան երևան գալ այդ չըլքիկ
պարոնները և իրենց վատ կըր-
քերէն թեկադրուած՝ ուղեցին
զեռ այն ատեն գործին արգելք
ըլլալ , ոչինչ առարկութիւններ
մէջ բերելով , և առանց Տ. Չե-
րաղի անցեալին և ներկային
վրայ որ եւ է տեղեկութիւն ու-
նենալու , այդ խռովարար ջուր
պղտորողները , ափեղ ցփեղ ա-
ռարկութիւններով , ուղեցին
գործը վիճեցնել , լսի իրենց
քսակներէն սէնդ մը կամ Ֆրանք
չի վճարելու համար : Արդ երբ
գործող երիտասարդութիւնը օ-
րին և ժամին իր պարտականու-
թիւնը կատարեց , այժմ այդ
հաւկիթի մէջ մող վնասող պա-
րոնները ելեր են կեղծ ստո-
րագրութեամբ «Իրաւունք» մի-
ջոցա որը , ցաւալի է խոստովա-
նիլ , ամէն կեղծիքներու արձա-
գանքն լինելու տկարութիւնն
ունի առանց գործին և խնդրոյն
յետամուտ կամ տեղեկ լինելու ,
հաշիւ կը պահանջեն յանձնա-
խումբէն :

Ա. Եթէ կան տեղույս գաղթակա-
նութեան մէջ այդ գումարին մա-
սին հաշիւ պահանջողներ , «Ի-
րաւունք»-էն առաջ պարտաւոր
էին յանձնախումբին գլխի , որը
Պուգարէշի հայ գաղթականու-
թեան վստահելի անձնատու-
թիւններէն կազմուած էր . և երբ
տեսնէին որ եւ է զեղծում , այն
ատեն կարող էին դիմել ուր որ
անկ էր :

Բ. Երբէք իրաւունք չունի
Արա-Արշամ մը հաշիւ պահանջել
յանձնախումբէն , երբ ինք իր
կծծիւթեամբ չէ մասնակցած
հաւաքուած գումարին :

Գ. Եթէ այդ պարոնը արդա-
րութեան նախանձախնդիր ու
անկեղծ ոմն էր , ի՞նչու կեղծ
անունով երեւան կուգայ :

Բայց ինչպէս վերը յիշեցի
այդ խառնակիչ պարոնները ա-
նուղղակի միջոցներով գործին
արգելք ըլլալ մտադիր էին :

Եւ զեռ չամչնալու վատու-
թիւնն ալ ունին , կասկածի են-
թարկել այնպիսի անձնատու-
թիւններ . որոնց մօտ իրենք հի-
լէյի մը չափ իսկ պատիւ ու ար-
ժանիք չունին , և ազգային
գործերի մէջ ամէն բանէ առաջ
իրենց քսակը մտածել ու պաշ-
տել գլխեն :

Գալով մնացորդ 64 Ֆրանքի
մասին , այդ գումարը գործա-
ծուեցաւ յանձնախումբի և նուի-
րատուների մեծամասնութեան
հաւանութեամբ մի քանի անկ-
եալ ու խեղճ թշուառ պանդուխտ-
ներու օգնելու մեր քսակներէն
ալ վրայ տալով՝ զո՛հ որտով :
Մենք այդ Արա-Արշամները

զրպարտիչ , կեղծարար ու ազ-
գային ամէն գործունէութեան
առաջ խոչնդոտ յարուցանող սեւ
որսմներ կոչելէ զատ պատասխան
չունինք . եթէ մի քիչ բարոյա-
կանութիւն ունեցած լինէին այդ
փողոցային մարդիկ , այս տեսակ
ազգանպաստ գործերի մէջ փո-
խանակ խռովարարների ու խոտ-
նակիչների դեր կատարելու ,
իրենք ալ գործին սղակցելով
պարտակնութիւններն կատարե-
լու էին . մենք համոզուած ենք
որ սեւին սապօնը , կոյրին ճրագը
օգուտ չի ունենար ու այդ սեւ
երես ու կոյր կեղծաւորների ե-
րեսներուն մենք կը թքենք միշտ
և յաւէտ :

Այս է մեր պատասխանը «Իրա-
ւունք»-ի Արա-Արշամին :

Վերոյիշեալ յանձնախումբը
Վառնայի մեր գաղթայիններէ միոյն
յանձնարարականի միջոցաւ ներ-
կայացող հանրաժանութեամբ վաղեմի
գործիչ Տիար Յարութիւն Չա-
քրեանի համար հանգանակու-
թեան մը ձեռնարկեց . ամսոյս
25ին , կիրակի օր , հանգանակուե-
ցաւ 114 Ֆրանք որը պիտի յանձ-
նուէր հիւանդ Չաքրեանին , բայց
գժբախտաբար երկրորդ օրը , ամ-
սոյս 26ին , իր սենեկին մէջ յախ-
ճանեցաւ Չաքրեան , և հանգա-
նակութեան ձեռնարկիչ խումբը
որոշեց այդ գումարով կատարել
վախճանեալին յուղարկաւորու-
թեան հանդէսը և թաղումը :
Հայ գաղթականութիւնը գլխա-
ցաւ յարգել նախկին հայ զինու-
րի մը սկիորները , իր տխուր
ներշնչութեամբ զետեղելով այդ
խոնջած սկիորները , Պուգարէշի
հայոց գերեզմանատան մի ան-
կիւնը . առանց նկատի առնե-
լու , վախճանեալին վերջին մի
քանի տարիներս բռնած ան-
արդարանալի սխալ քայլը :

Ի դիմաց յանցնախմբի
Անդամոց
Հագարիկ Առնիւան

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ս. Ո. Ի. Փ

Թէկիւրի , Գ. Յ. — Չեր առա-
ջարկը կատարեցինք . միայն եր-
կու Ֆրանք ալ պիտի զրկէք . ո-
րովհետեւ արտասոհման երկուսը
միասին զրկելով է որ 12 Ֆրանք
արժէ , երկու անգամ ըլլալու հա-
մար , երկու Ֆրանք ալ փօստի
ծախք կը վճարուի :

— Ֆօքշան , Վ. Մ. — Դրամը
ստացանք . անգործադիրը վեր-
ջին համարի հետ զրկուեցաւ :

— Ուլիւնա , Ս. Գ. — Չեր ը-
սած ամերիկեան թերթի մասին
երբ հաստատ տեղեկութիւններ
առնենք , այն ժամանակ կը հա-
ղորդենք :

— (—) —

ՆԱԾԱԿ ԽՐԱԿՆԵՐԻՆ

Շնորհ ըրէք հետագայս՝ իբր պատասխան՝ ինձ նկատմամբ հրատարակուած նամակին, պատուական թերթիդ մէջ հիւրընկալել. «նարժումի 147 թուոյն մէջ տեղէս գրուած «ստայող» նամակ մը ինձ դէմ ամբաստութիւն ըրած է, որովհետեւ նամակագիր պարտն ով որ ալ է, գիտէ թէ կալայ միայն մի քահանայ կայ և այն ալ ես եմ, ուրեմն «քահանարէն մին» ըսելով վարագործին երբեք ծածկուելու հարկ չմնար. «Ուստի ներկա իւր կը հրաւիրեմ Պ. նամակագիրն, որ իր կողմէն երբք հոգի ընտրելով նոցա առջեւ հաստատէ իւր զրպարտութիւնն, որոց տալիք վճիռն որքան ալ խիստ լինի, այժմէն պատրաստ եմ ընդունելու. իսկ եթէ մինչեւ 15 օր իմ առաջարկութիւն անգործադրելի մնայ, իրաւունք կուտամ ինձ Պ. նամակագիրն ի լուր աշխարհի հրապարակելու թէ ինքը «վատ, զըրպարարիչ, դաւաճան և մատնիչ» մըն է. վիճ մեծ է ընդ իմ և ընդ նորա»

Ողջունելու սիրոյ և որհնութեամբ
Մնամ աղօթարար
Ղեւոնդ Բիւնջ Փախագեան
Կալաց, 24 Յուլիս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թուրքիոյ դատական նախարարութեան կողմէ պաշտօնագրով մը արտօնուած ըլլալով Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութիւնը կատարեալ հին սովորութեան համաձայն. Պատրիարքը հրաւիրագրով Խառն ժողովի բոլոր անդամները հրաւիրած էր գումարումի. Խառն ժողովի անդամները յուլիս 28ին գումարուելով Ղալաթիոյ Խորհրդարանը կարգացեր են այդ պաշտօնագիրը. և ըստ այնմ ընտրական գործողութեանց հոկեղու պաշտօնը յանձնեցին Ս. Երուսաղէմի վանքին լուսարար պետ Տ. Սահակ եպոս. Խապանանի, և Պատրիարքին ալ յանձնարարեցին փութացնել այս կարեւոր գործին կատարումը. — Օրմանեան Խառն ժողովի անդամներուն զրկած է Սահմանադրութեան օրինագրքէն մէջ մէկ հատ, հարկ տեսած բարեփոխութիւնը նշանակելով և առանձին նամակով մըն ալ յանձնարարած է որ իրենց պէտք տեսած բարեփոխութիւնը նշանակեն, որպէս զի երբ ինքիբը Խառն ժողովոյ մէջ խորհրդակցութեան արուի, ամէն անգամ կարենայ իր կարծիքը յայտնել. — Կիլիկիոյ ընտրուած կաթողիկոս Ալէքանդրեան Գրիգորիս եպիսկոպոս որուն հիւանդութիւնը ծանուցած են արդէն փոխադմուէր է Սկիւտար Պաղլար-Պաշի

մասնաորակէս վարձուած տան մը մէջ: Այս օգտափութութիւնը նպատած է, և բաւական հանգստացած: — Վեհ. Կաթողիկոսը տեղեկանալով որ շատ մը գաւառներէ եկեղեցական գրքեր ուզուած են, բաւական թուով զրկեր է նոյն գիրքերէն, կարօտ եկեղեցիներուն համար: Երուսաղէմի Ս. Պատրիարքին ալ գիտեմ պիտի ըլլայ Պատրիարքարանէն, և վերստին եկեղեցական գրքեր պիտի ուզուին: — Չը յիշուին Ռուսական մէջ. Քէօստէնէն թղթակից մը մեղ կիմացնէ որ, քաղաքին հայ գաղթականութիւնը յաջողեր է համոզել Թալ. Խորհուրդը և քահանան որպէս զի Օրմանեանի առունը չը յիշուի պատարագին: Եւ առաջին անգամ ըլլալով վարդապետի առտուն կատարուեր է ժողովուրդի բաղձանքը: Քէօստէնէն Ռուսական հայերուն առաջին քաղաքն է որ բողոքելու ճամբուն մէջ կը մտնէ: — Ամերիկայէն եկած նամակ մը վերապահութեամբ կիմացնէ թէ Սարաճեան եպոս. հրաւիրեր է հանրածանօթ Արսէն վարդապետը որպէս Ամերիկայ երթալու և Վաղինակ վարդապետի յաջորդէ: Ինչպէս կերելի Սարաճեան մտադիր է միշտ ազմուկի և պառակտումի մէջ պահել նոր աշխարհի հայ գաղութը: Բայց մեղի կիմացնեն թէ Փրօվիտէնսի հայերը չի պիտի թոյլատրեն որ իրենց սիրելի և անդրանիկ ողբացեալ առաջնորդի յիշատակը պիտի հրէջի մը ներկայութիւնովը: — Պոլսական թերթերու մէջ կը կարդանք. Խարբերդի զօրաց հրամանատար Մուսթաֆա փաշա, որ 18 ժարիէ ի վեր հոն կը գտնուէր, Տէրսիմ գացեր է, այն տեղի զօրաց հրամանատարութիւնը ստանձնելու համար: Գ. Չօրաբանակն (Երզնկա) հրամանատար Ձէքի փաշա ալ հոն պիտի երթայ, ուր երկուքն ալ պիտի զբաղին քուրտ ցեղերը Համիտիյէ հեծելազուներուն զինուորագրելու: — Ռուսոյքէն կը հաղորդեն որ հոն ալ երիտասարդութեան և ժողովրդի պահանջումով Օրմանեանին յիշուիլը դադարած է: Վերջապէս Ռուսոյքն ալ իր չինական անդալտութենէն արթնցաւ: Մեր թղթակցութիւնը այդ մասին յաջորդ անգամ կը հրատարակենք:

Ա Ձ Գ

Այս երեկոյ ժամը 8 1/2 ին բողոքականաց եկեղեցոյ մէջ Պատար վանկէման Ռուսոյքի իր որբանոցին վրայ տեղեկութիւն պիտի տայ: Ասանաբանութիւնը՝ որ պիտի ըլլայ գերման լեզուաւ, պիտի թարգմանուի հայերէնի: Ամէն ոք սիրով կը հրաւիրուին: —)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը թոյլ չէ տուած որ Ամերիկեան ամերիկա Տիւէ իր նաւով Տարտանէլը անցնի, պատճառաբանելով որ դաշնագրութիւնները կարգիլին: Երբ Ամերիկեան դեսպանը գրտեր է որ այդ պատճառաբանութիւնները անհիմն են. Սուլթանը յայտնած է որ չի ուզեր Սպանիան վերադարձը: Դեսպանը փորձեր է սր ամերիկալը գայ առանց իր նաւին. սակայն Տիւէ մերժած է վերջնականապէս առանց իր նաւին Պոլիս մտնալ: Ռուսական «Նովոստի» լրագիրը Ֆրանսական և Ռուսական բարեկամական մտտիկ յարաբերութիւնները հաստատելով հանդերձ՝ որոշակի կերպով կը դատապարտէ քանի մը օտար թերթերու ասպատակ նետած դաշտափարը. իբր թէ Ֆրանսո-Ռուսական բարեկամական դաշնակցութիւն մը կազմելը կնքուիլով դէմ, որը անգործնական, անյարմար և անօգուտ կը համարէ: — Տէլքասէն շատ լաւ ընդունելութիւն գտած է Ռուսիոյ թէ պաշտօնական շրջանակներու մէջ և թէ այլոց կողմէ: — Հողագործական գրգռումները նորէն սկսած են Հոռմի շրջակայ քանի մը տեղերու մէջ. նախորդ տարիներու նման գիւղացիները կը պահանջեն որ իրենց տրուի կայուն ածառներու հողերէն մաս մը հացահատիկներ մշակելու համար. կառավարութիւնը դունտ մը զօրք զրկած է խռովութեանց վայրերը: — Մարաշախտ Մահսին խան Մուշիր էդ տէօվլէթ, Պարսկաստանի արտաքին գործոց նախարարը, Բարիդ քանի մը օր առաջ, օթէլի մը մէջ յանկարծամահ եղած է: — Սերպիոյ Ալէքսանտր թագաւորը ունեար դաղութէն պատճառաբանութիւն մը ընդունած միջոցին ըսած է «ներկայ Սերպիան իր գոյութիւնը պարտական է Աւստրիոյ. ուստի Սերպիոյ թշնամիները թշնամի են և Աւստրիոյ-Հունգարիոյ»: Ռուսիոյ աչքը լոյս: Ձին և ձաքօնական դաշնակցութիւնը, որուն համար այնքան ազմուկ բարձրացաւ, կը թուի թէ այնքան ալ մեծ յաջողութիւն ունեցած չէ: Ռուսական դեսպանը նօթ մը տուած է, որով կը յայտարարէ թէ այդ դաշնակցութիւնը շատ քիսասակար հետեւանքներ պիտի ունենայ Ձինի համար: — Սէնտ Տօմիկոյի մէջ ապրտամբութիւնը կը սաստկանայ. Մօնթէ Բրիտտի նաւահանգիստին կառավարիչը անկարող է երկար գիմանալ առանց օգնութեան:

— Սերպիոյ Ալէքսանտր թագաւորը ըստ պատաղ լուրերուն, իր կարկաչաւ երթալու վերջին վայրկեանին որոշած է երթալ Նիշ. վախնալով ապտամբներու պետերը թողուլ Սիլանի վրէժխնդրութեան. և հոն պիտի մնայ մինչեւ դատի վերջը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՐԵՎԵԱՅ

Բ. ՏԱՐԵՇՐԱՆ

Վարժարանս խիստ դժուարին պայմաններու մէջ յաջողապէս բուրբելով իր առաջին շրջանը, կը վերաբացուի յառաջիկայ Սեպտ. 1/18ին, աւելի լայն ծրագրով մը եւ շրջապատուած նոր ուժերով: Կաւանդուին, բացի հայերէն, պուրկարէն ու ֆրանսերէն լեզուներէն՝ որոնք պարտաւորիչ են, նաեւ սնդիլերէն ու գերմաներէն կամաւոր: Խնամքով կաւանդուին նաեւ ծրագրուած գիտութեանց բոլոր ճիւղերը, գործնական ու փորձատական մէթոտով: Գործակալն առարկաներու անհրաժեշտ հաւաքածոյ մը կը զիւրացնէ թէ՛ ուսուցչին եւ թէ՛ ուսանողին աշխատութիւնները: Չութակի եւ դաշնակի դասեր՝ մասնաւոր վճարովներով: Աշակերտք եւ աշակերտուէիք պիտի մասնակցին գրական, գիտական եւ երաժշտական երեկոյթներու, որոնք պիտի կազմակերպուին յառաջիկայ շրջանին, յօգուտ բարենորոգատակ ձեւերովներու. եւ որոնք պիտի ծառայեն՝ միւլեւոյն ատեն իբր գործնական դասեր՝ վարժեցնելու ուսանողները հանրային կեանքի պարտականութեանց: Ֆիզիքական մարզանքներու համար մասնաւորապէս պիտի ընտրուին անգլիական խաղեր: Կալաքը վճարող աշակերտները պիտի կրնան հետեւել նաեւ թիւթարութեան եւ նշանառութեան փորձերու: Վարժարանս հաստատուած ըլլալով քաղաքին ամենէն մաքուր եւ օգտուն մասին մէջ, կը լրացնէ առողջապահական ամէն պայմանները: Կարգապահութիւն, մաքրութիւն, խնամուած սնունդ եւ բժշկական կանոնաւոր այցելութիւնք առողջական լաւագոյն վիճակ մը կապահովեն դիչերթիկ ուսանողներուն համար: Փափաքող ծնողաց պարտաստ եմ սալ պատուաւոր եւ հասկցող անձնաւորութիւններու բացարձակ երաշխաւորութիւնը: Գիշերթիկ աշակերտութիւններու համար մասնաւոր չէք յատկացուածէ: Ընդունելութեան պայմաններու եւ աւելի ընդարձակ տեղեկութեանց համար նամակով կամ անձամբ՝ գիմել առ՝ Հիմնադիր-Տնօրէն Հայկական-Կրթարանի ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Ա Ձ Գ

Փորագրութեան, լուսատուութեան եւ լուսավիճարութեան ամէն ճիւղերուն մէջ ստացած հմտութեանը համար՝ Գերմանիոյ մէջ մեծաւ ընդունող հայ երիտասարդ մը կը փնտտէ զրամատէր բնկեր մը՝ սոյն զեղարուեստներու վրայ գործ սկսելու համար: Փափաքողն զիմէ խորագրութեանս: 3-3